

210. ՀԻՄԱՐ ՏԵՐՏԵՐԸ

Մի գյուղում մի շատ հիմար տերտեր է լինում։ Սա որպեսզի նոր տարվանից հաշվի, թե երբ պետք է զատիկը գա, գրպանը լցնում է այնքան լոբի, որքան օր կա և օրը մեկը դեն ձգում։

Մի օր պատահմամբ իրիցկինը տերտերի շորերը թափ տալիս, բոլոր լոբին լցնում է թորենը։ Որպեսզի տերտերը չկռվի հետը, գնում է և մեծ քանակությամբ լոբի բերում ու լցնում տերտերի գրպանը։

Օրեր են անցնում, գալիս է զատկի տոնակատարության օրը, բայց տերտերի գրպանում դեռ շատ լոբի կա։ Մի օր էլ մի պառավ հարցնում է.

—Տեր Հայր, բա զատկի օրե՞րը չեն։

—Այ պառավ,—պատասխանում է տերտերը,—թե եղանակին ու օրերին եմ նայում, զատկի օրերն են, իսկ թե գրպանիս լոբուն եմ նայում, հլա տուշ է գալու։